ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը բուժաշխատողների մասնագիտական տոնի կապակցությամբ

Սյունյաց աշխարհի հարգելի բուժաշխատողներ.

Ջերմորեն շնորհավորում եմ առողջապահության համակարգի աշխատողներին՝ Ձեր մասնագիտական տոնի կապակցությամբ:

Սա լավագույն առիթ է պատշաճն մատուցելու ձեզ՝ ձեր նվիրումի, կատարած շնորհակալ և մարդասիրական աշխատանքի համար: Դուք մշտապես գործ եք ունեցել ամենաթանկի՝ մարդու առողջության և կյանքի հետ, պատվով տարել ձեր խաչը:

Մեր երկրի համար ամենածանր ժամանակներում դուք միշտապես կանգնած եք եղել ժողովրդի կողքին, հավատարիմ մնացել Հիպոկրատի երդմանը, դժվարին պահերին հնարավոր դարձրել անհնարինը:

Մաղթում եմ առողջություն, հաջողություններ ձեր չափազանց բարդ ու պատասխանատու աշխատանքում, մասնագիտական վերելք և խաղաղ աշխատանք:

Հարգանքներով

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյան